



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» սեպտեմբերի 2019 թվականի թիվ 118-Ա

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՁ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱԼԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՅՐՈՒՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՁ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի դ) ենթակետով և 3-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Տավուշի մարզի Այրումի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 31-րդ կետի 3) ենթակետը և Այրում համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 8-ի թիվ 47-Ա որոշումը՝

որոշում եմ.

1. «ՀՀ Տավուշի մարզի Այրումի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «ՀՀ Տավուշի մարզի Հարություն Մալինյանի անվան Այրումի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության:
2. Հաստատել «ՀՀ Տավուշի մարզի Այրումի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության փոփոխված կանոնադրությունը:

3. «ՀՀ Տավուշի մարզի Այրումի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ փոփոխված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցման:



Հ.ԶՈՐԱՆՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 4  
ք.հջևան